Известия НАН РА. Науки о Земле, 2004, LVIII, №2, 62-64

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

Լրացավ օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանության, միներալոգիայի, երկրաքիմիայի և մետաղածնության բնագավառներում ճանաչված գիտնական, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Իլոյի Կարապետյանի ծննդյան 70-ամյակը:

Ա.Ի.Կարապետյանը ծնվել է 1935թ. ապրիլի 20-ին, Էջմիածին քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Գյումրիում, այնուհետև, գերազանցությամբ ավարտելով Երևանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը, 1958թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում:

Արդեն առաջին տարիներին դրսևորվեցին Ա.Կարապետյանի, որպես երկրաբան-հետազոտողի, լավագույն հատկությունները՝ աշխատասիրություն, երկրաբանական բարդ խնդիրներ լուծելու ունակություն և վերջապես սեր երկրաբանության հանդեպ:

Նրա գիտական առաջին աշխատությունները, նվիրված էին Այգեձորի հանքավայրի հանքայնացման առանձնահատկություններին, մասնավորապես հազվագյուտ միներալների, և ազնիվ տարրերի (գերմանիում, ոսկի) ուսումնասիրություններին: Պատահական չէր, որ նրա թեկնածուական ատենախոսությունը, որը պաշտպանեց 1964թ., վերաբերվում էր գերմանիումի միներալոգիային և երկրաքիմիային: Ատենախոսության պաշտպանությունից հետո ընդարձակվում է Ա.Կարապետյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը, ընդգրկելով հազվագյուտ և ազնիվ տարրերի երկրաքիմիայի ուսումնասիրությունը Հայաստանի բոլոր հանքային ֆորմացիաներում: Այդ աշխատանքների արդյունքները ամփոփվեցին կոլեկտիվ մենագրության մեջ, որի գիտական ղեկավարը և համահեղինակներից մեկը ակադեմիկոս Հ.Գ.Մաղաքյանն էր: 1972թ. հրատարակված այս մենագրությունը՝ «Հազվագյուտ և ազնիվ տարրերը Հայաստանի հանքային ֆորմացիաներում», 1974թ. արժանանում է Հայաստանի Պետական մրցանակի գիտության բնագավառում:

Սուր դիտողականությունը և միներագրաֆիայի օպտիկական մեթոդներին գերազանց տիրապետումը հնարավորություն տվեցին Ա.Կարապետյանին Հայաստանի հանքանյութերում առաջին անգամ հաստատելու բազմաթիվ հազվագյուտ միներալների՝ գերմանիտի, ռենյերիտի և թելուրիդների առկայությունը պղինձ-մոլիբդենային, ոսկի-բազմամետաղային, կոլչեդանային և այլ հանքային ֆորմացիաներում:

Ա.Կարապետյանը հետևողականորեն շարունակեց և խորացրեց հանքային ֆորմացիաների ծագումնաբանությանը և ֆորմացիոն դասակարգմանը նվիրված հարցերի ուսումնասիրությունները, որը սկսել էր նրա ուսուցիչը, ակադեմիկոս Հովհաննես Մաղաքյանը:

«Փոքր Կովկասի Փամբակ-Զանգեզուրյան մետաղածնական գոտու ներծին հանքային ֆորմացիաները» թեմայով դոկտորական ատենախոսությունը Ա.Կարապետյանը պաշտպանեց 1979թ., Մոսկվայի հազվագյուտ տարրերի միներալոգիայի և երկրաքիմիայի ինստիտուտում: Նոր պատկերացումների լույսի ներքո նա ներկայացրեց բեկորային կառուցվածքով բնութագրվող Հայաստանի տարածքի երկրակեղևի սահմաններում հանքայնացման համար բարենպաստ մետաղածնական գոտիների և հանքային հանգույցների առաջացումը, ստորաբաժանեց բազմատապային, երբեմն նաև բազմաֆորմացիոն հանքավայրերի տիպերը, ինչը վճռական նշանակություն ունեցավ մետաղածնության բարդ հարցերի լուծման խնդրում:

Լինելով հանքանյութերի միներալոգիայի և երկրաքիմիայի լավագույն գիտակներից մեկը, Ա.Կարապետյանը վերաքննել է հանքանյութերի ֆորմացիոն դասակարգման հարցերը և առաջարկել «հանքային ֆորմացիա» հասկացության նոր սահմանում:

Ա.Կարապետյանն առաջինն էր, որ համակարգեց հանքային ֆորմացիաները հիերարխիկ շարքում՝ հանքային ֆորմացիաների գենետիկ խմբեր–հանքային ֆորմացիաներ – հանքային ֆորմացիաների կոմպլեքս, մասնավորապես՝ Փամբակ-Զանգեզուրյան մետաղածնական գոտու 6 գենետիկ խմբերում, առանձնացնելով 27 հանքային ֆորմացիաներ:

70-ական թվականների վերջում Ա.Կարապետյանը կազմեց «Փամբակ-Զանգեզուրյան ստրուկտուրային-ֆորմացիոն զոնայի և Փոքր Կովկասի հարակից մասերի հանքային ֆորմացիաների քարտեզ» 1:200000 մասշտաբի և ցույց տվեց, որ Հայաստանի տարածքում իրար հաջորդող մետաղածնական դարաշրջանների միջև կա ժառանգականություն, հանքանյութերի կազմի և էվոլյուցիայի միասնական ուղղվածություն, բնորոշ է մետաղածնական վաղ դարաշրջաններից դեպի ուշ դարաշրջանները հանքայնացման ուժգնությամբ և հանքանյութերի բազմազանությամբ:

Այս գիտական մոտեցումները 1982թ. հրատարակված են «Փոքր Կովկասի Փամբակ-Զանգեզուրյան մետաղածնային գոտու ներծին հանքային ֆորմացիաները» մենագրության մեջ:

Ա.Կարապետյանը 1981թ. մինչ 1991թ. եղել է ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կանխատեսումային-մետաղածնական լաբորատորիայի վարիչ, իսկ 1986-91թթ. տնօրենի տեղակալ գիտության գծով:

պետյանը աշխատել է որպես ավագ երկրաբան "Ebarhart and Stone" ընկերությունում և մասնակցել բազմաթիվ նախագծերի ստեղծմանը: Նա ներկայացնում է Հայաստանի գիտությունը հայ-ամերիկյան ճարտարագիտական ընկերության ավագ գիտական խորհրդականի պաշտոնում: Ա.Կարապետյանը շարունակում է Հայաստանի երկրաբանական խնդիրներին առնչվող գիտական հետազոտությունները. համահեղինակ է Սևանա լճի հիդրոքիմիային, Հայաստանի կենտրոնական մասի նավթագազաբերության հեռանկարներին նվիրված մենագրությունների: Հեղինակ է նաև երկրաբանության. օգտակար հանածոների և հայ անվանի գիտնականների մասին մի քանի տասնյակ հրապարակախոսական և գիտահանրամատչելի հոդվածների:

Ա.Կարապետյանը 1989թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ. 1996թ.՝ ակադեմիկոս: Վերջին տարիներին նա ԱՄՆ-ի մասնագետների հետ համատեղ շարունակում է հետազոտությունները երկրակեղևի երկրաշարժավտանգ և հանքատար բեկվածքային մի շարք գոտիների (Սան-Անդրեաս. Հյուսիս-Անատոլիական. Ջավախք-Սևանի և այլն) երկրաքիմիայի վերաբերյալ:

2002թ. Ա.Կարապետյանին շնորհվել է ՌԴ Դուբնայի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում: Պարգևատրվել է Ռուսաստանի Բնական գիտությունների ակադեմիայի Ա.Էյնշտեյնի. Վ.Վերնադսկու. Պ.Կապիցայի և Պետրոս Մեծի հուշամեդալներով: Ընտրվել է Նյու-Յորքի Գիտությունների ակադեմիայի. ՌԴ Բնական գիտությունների ակադեմիայի. Հայաստանի և Միջազգային Ճարտարագիտական ակադեմիաների ակադեմիկոս: Ներկայումս ակադեմիկոս Ա.Կարապետյանը փորձագետ-խորհրդական է "Ebarhart Consultants" ընկերությունում: Նա միջազգային հեղինակություն վայելող գիտնական-փորձագետ է մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանության. երկրաքիմիայի. մետաղածնության և սեյսմոերկրաքիմիայի ասպարեզներում:

Ա.Կարապետյանը ունի անսպառ էներգիա և աշխատասիրություն. բազում ծրագրեր և ստեղծագործական նոր մտահղացումներ:

Ի սրտե շնորհավորում ենք Աշոտ Կարապետյանի 70-ամյա հոբելյանը. մաղթում նրան քաջ առողջություն. նորանոր ստեղծագործական հաջողություններ և ամենայն բարիք:

ՀՀ ԳԱԱ Նախագահություն
ՀՀ ԳԱԱ ՖՄՏԳ բաժանմունք
ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ Տեղեկագրի "Գիտություններ Երկրի մասին" հանդեսի խմբագրական կոլեգիա

К 70-ЛЕТИЮ АКАДЕМИКА НАН РА А. И. КАРАПЕТЯНА

Известному ученому, академику НАН РА, доктору геолого-минералогических наук в области металлогении, геологии рудных месторождений, минералогии и геохимии, профессору Ашоту Илоевичу Карапетяну исполнилось 70 лет со дня рождения.

А.И.Карапетян родился 20-го апреля 1935г., в гор.Эчмиадзине. Среднее образование получил в гор.Гюмри, в 1958 году с отличием окончил геологический факультет Ереванского Государственного универсистета и в том же году поступил на работу в ИГН НАН РА.

Первые работы А.И.Карапетяна были посвящены особенностям оруденения Айгедзорского месторождения. Кандидатская диссертация, которую он защитил в 1964 году, была посвящена изучению процессов рудоотложения, минерального состава и геохимии руд Анкаванского медно-молибденового месторождения. Им в этих рудах впервые были установлены и детально изучены минералы германия, а также описаны теллуриды золота, серебра, висмута и др. в рудах различных месторождений Армении. Результаты этих работ, вместе с минералого-геохимическими исследованиями ряда сотрудников института, были обобщены в монографии «Редкие и благородные элементы в рудных формациях Армянской ССР», которая в 1974г. была удостоена Государственной Премии Армянской ССР в области науки.

А.И.Карапетян последовательно расширял и углублял свои знания в области генезиса рудных формаций и формационной классификации руд, исследования которых были начаты его учителем, академиком И.Г.Магакьяном.

Докторскую диссертацию А.И.Карапетян по теме «Эндогенные рудные формации Памбак-Зангзурской металлогенической зоны Малого Кавказа» в 1979г. успешно защитил в Москве, в Институте минералогии и геохимии редких элементов (ИМГРЭ). В этой работе А.И.Карапетян развивает представления о формировании металлогенических зон и рудных узлов в пределах блоковой структуры земной коры Армении и впервые выделяет полиэтапные и полиформационные месторождения, что имело важное значение в деле их освоения.

В конце 70-х годов А.И.Карапетяном была составлена «Карта Памбак-Зангезурской структурно-формационной зоны и рудных формаций прилегающих частей Малого Кавказа» 1:200000 масштаба с отражением наследственности и еди-

ной направленности составов и эволюции руд. Эти научные исследования были обобщены и опубликованы в монографии «Эндогенные рудные формации Памбак-Зангезурской металлогенической зоны Малого Кавказа» (1982г.).

Научно-творческая деятельность академика А.И.Карапетяна очень разносторонняя. Он опубликовал более 200 научных статей, является автором и соавтором более 10 монографий.

А.И.Карапетян одновременно с научной работой вел большую научно-организационную и общественную работу, с 1982 по 1991гг., будучи заведующим прогнозно-металлогенической лабораторией Института геологических наук НАН РА, а с 1986 по 1991 годы заместителем директора института по науке, был председателем научного совета по выставкам и управляющим делами Президиума НАН РА. А.И.Карапетян неоднократно избирался депутатом городского и районных советов, председателем Объединенного профсоюза НАН РА.

В 1991-1993гг. А.И.Карапетян возглавлял Управление по недрам и природным ресурсам РА.

А.И.Карапетян имеет большой вклад в деле представления достижений науки и техники Армении в разных странах на всемирных выставках (Канада, 1980г., Япония, 1985г., Финляндия, 1987г.).

В 1994г. А.И.Карапетян переехал жить в США. В 1994-2004гг. А.И.Карапетян работал старшим геологом в компании «Ebarhart and Stone Inc.» и участвовал в разработке ряда проектов. Он также является автором ряда публицистических и научно-популярных статей о геологии, полезных ископаемых Армении и об известных армянских ученых.

А.И.Карапетян. был избран членом-корреспондентом НАН РА в 1989г, академиком НАН Армении в 1996г.

В последние годы он вместе с американскими специалистами продолжает исследования по геохимии ряда сейсмоопасных и рудоносных нарушений Земной коры (Сан-Андреас, Северо-Анатолийское, Джавахк-Севанское и др.).

В 2002г. А.И.Карапетяну было присвоено звание почетного доктора Университета Дубны РФ, он избран академиком инженерных академий РФ, Армении и Международной инженерной академии. Он награжден памятными медалями Э.А.Эйнштейна, В.Вернандского, П.Капицы, Петра Великого и Российской Академии естественных наук.

В настоящее время академик А.И.Карапетян является экспертом-советником в компании "Ebarhart Consultants Inc." в областях геологии месторождений полезных ископаемых, геохимии, вице-президентом американских филиалов Академии Естественных наук РФ и Инженерной академии Армении.

Искренне поздравляем А.И.Карапетяна с 70-летним юбилеем, желаем ему доброго здоровья и новых творческих успехов.

Президиум НАН РА
Отделение ФМТН НАН РА
Институт геологических наук НАН РА
Редколлегия журнала "Известия НАН РА, Науки о Земле"